

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

25/05/2020թ. N142 նիստում

Նախագահ՝  Ա. ՍԱՐԳՍՅԱՆ



**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ**

I. Կենտրոնի գործունեության պլանավորումը

1. Գործունեության պլանավորումը հանդիսանում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի/այսուհետ՝ Կենտրոն/ կառավարման կարևորագույն գործառնություններից մեկը: Պլանը հանդես է գալիս որպես Կենտրոնի գործունեության և զարգացման նպատակների քանակական արտահայտություն և դրանց հասնելու ուղղությամբ մշակված ուղիների ամբողջություն: Ըստ այդմ, պլանավորումը, որպես գործընթաց, հանդիսանում է նպատակներին հասնելու միջոց:

2. Կենտրոնի գործունեության պլանավորումը պետք է ապահովի վերջինիս վերապահված գործառնությունների ամբողջական և պատշաճ իրականացումը և տնտեսական կայունությունը և պետք է բավարարի ներքոհիշյալ պահանջներին.

ա/ Ճկունություն, ճշգրտում իրականացնելու հնարավորություն՝ հիմնվելով «պլանավորված միջոցառում-փաստացի արդյունք» սկզբունքով կատարվող վերլուծության արդյունքների վրա,

բ/ ձևակերպման ճշգրտություն և հստակություն,

գ/ պլանավորվող գործառնությունների համալիրություն և ամբողջականություն,

դ/ պլանավորման գործընթացին բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովում և այս համատեքստում Կենտրոնի բոլոր մակարդակների ղեկավարների լիազորությունների և պարտականությունների հստակ տարանջատում:

II. Կենտրոնի ֆինանսական պլանավորման ընթացակարգի նկարագիրը

3. Կենտրոնի ֆինանսական միջոցների պլանավորումը բխում է վերջինիս ֆինանսական քաղաքականության հիմնական ուղղություններից, այն է՝

- Տարեկան միջոցառումների ծրագրի կազմում,
- Տարեկան միջոցառումների ծրագրի հիման վրա տարեկան բյուջեի կազմում,
- Համապատասխան միջոցառումների իրականացում՝ պլանային, բյուջետային և արտաբյուջետային քաղաքականության պահպանման ուղղությամբ՝ Կենտրոնի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով,
- Կենտրոնի գործունեության արդյունքների հաշվառում և վերլուծություն:

4. Կենտրոնի գործունեության ֆինանսական պլանավորումն իրականացվում է բյուջետային գործընթացի միջոցով, որը հիմնվում է երկու հիմնական գործիքների վրա.

- ֆինանսական պատասխանատվության կենտրոնների սահմանում,

- Կենտրոնի բյուջեի մշակում:

5. Կենտրոնի ֆինանսական պատասխանատվության կենտրոններն են՝ Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց ղեկավարները մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը կազմում և ֆինանսական բաժնին են ներկայացնում իրենց ղեկավարած ստորաբաժանման առաջիկա տարվա իրականացվելիք միջոցառումների պլանը, այդ միջոցառումների իրականացման համար պահանջվող ապրանքների և նյութերի ծախսերը, դրանց հիմնավորումները, միջոցառումների վերջնարդյունքները:

6. Կենտրոնի ֆինանսական բաժնում մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 15-ը ուսումնասիրվում են Կենտրոնի ֆինանսական պատասխանատվության կենտրոնների կողմից ներկայացված պլանների կազմման ճշտությունը՝ դրանք համադրելով առաջիկա տարվա կանխատեսվող եկամուտների հետ :

7. Անհամապատասխանությունների կամ լրացուցիչ հիմնավորումների անհրաժեշտության դեպքում Ֆինանսական բաժնի կողմից պլանը հետ է վերադարձվում՝ նշելով անհամապատասխանությունը: Համապատասխան ստորաբաժանումը 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարելով անհրաժեշտ ճշգրտումներ՝ Ֆինանսական բաժին է ներկայացնում լրամշակված պլանը :

8. Ֆինանսական բաժինը մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 30-ը ներկայացված պլանների հիման վրա կազմում և Կենտրոնի տնօրենի հաստատման է ներկայացնում Կենտրոնի տարեկան բյուջեն:

III. Կենտրոնի բյուջեն և դրա հիմնական գործառույթները

9. Կենտրոնի բյուջեն վերջինիս նպատակներին հասնելուն միտված տնտեսական կայուն զարգացման պլանի ֆինանսական արտահայտությունն է: Կենտրոնի կառավարման համակարգում բյուջեի կարևորությունը բնութագրվում է վերջինիս հիմնական գործառույթներով, որոնք հետևյալն են.

- Գործառնությունների պլանավորում, որոնք ապահովում են Կենտրոնի գործունեության և զարգացման նպատակների իրագործումը:
- Կենտրոնի գործունեության տարբեր տեսակների և ստորաբաժանումների ընդհանուր կոորդինացում, ֆինանսական պատասխանատվության կենտրոնների և Կենտրոնի շահերի փոխհամաձայնեցում
- Բոլոր մակարդակների ղեկավարների խթանում իրենց ղեկավարած ստորաբաժանում երի առջև դրված նպատակներին հասնելու ուղղությամբ:
- Ընթացիկ գործունեության վերահսկողություն և պլանային կարգապահության ապահովում:
- Գործունեության հետազոտություն. Բյուջետավորումը նպաստում է Կենտրոնի գործունեության մանրամասն հետազոտությանը, ինչպես նաև ստորաբաժանումների միջև և Կենտրոնի վարչական պագմի հետ առկա փոխհարաբերությունները:

10. Բյուջեի մեջ արտացոլվող տեղեկատվությունը պետք է լինի հնարավորինս հստակ, որոշակի և նպատակային՝ այն օգտագործողի տեսանկյունից:

11. Բյուջետավորման նպատակներն են.

- Կենտրոնի կայուն զարգացման հայեցակարգի մշակում, այդ թվում՝
- Կենտրոնի ֆինանսա-տնտեսական գործունեության պլանավորում որոշակի ժամանակահատվածի համար,
- Ռեսուրսների բաշխման օպտիմալացում,
- Ստորաբաժանումների և ֆինանսական պատասխանատվության կենտրոնների գործունեության կոորդինացում,
- Հաղորդակցությունների ապահովում՝ բյուջեի ցուցանիշների մասին տարբեր մակարդակի ղեկավարներին իրազեկում և դրանց հասանելության ապահովում,

- Ստորաբաժանումների և դրանց ղեկավարների շահադրդում՝ Կենտրոնի զարգացման նպատակների հասնելու ուղղությամբ:
- Ստորաբաժանումների գործունեության վերահսկողություն և գնահատում՝ փաստացի արդյունքների և բյուջետային նորմատիվների համեմատության միջոցով:
- Ֆինանսական ռեսուրսների պահանջումների բացահայտում և դրամական հոսքերի օպտիմալացում:

IV. Կենտրոնի բյուջեի կատարման մշտադիտարկումը

12. Կենտրոնի բյուջեի կատարման ընթացքի մշտադիտարկումն իրականացնում է Ֆինանսական բաժինը , որը եռամսյակային պարբերականությամբ Կենտրոնի տնօրենին հաշվետվություն է ներկայացնում բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ:

13. Ֆինանսական պատասխանատվության կենտրոնները Ֆինանսական բաժնին եռամսյակային կտրվածքով հաշվետվություններ են ներկայացնում Կենտրոնի բյուջեով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի և ծախսված ֆինանսական միջոցների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Կենտրոնի բյուջեում համապատասխան վերաբաշխում իրականացնելու վերաբերյալ:

14. Կենտրոնի բյուջեում վերաբաշխումներ կարող են իրականացվել Ֆինանսական բաժնի դրական եզրակացության դեպքում:

15. Կենտրոնի հաշվետվողականության համապատասխան համակարգը սերտորեն կապված է պլանավորման փաստաթղթերի հետ և, ըստ այդմ, Ռազմավարական (երկարաժամկետ) զարգացման ծրագրերի, Գործունեության տարեկան ծրագրի և Տարեկան բյուջեի կատարման հաշվետվություններն ապահովում են շրջանակ՝ ընդհանուր մշտադիտարկման և գնահատման համար: